

ԾԱՂԿԱՔԱՂ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ

ԵՕԹՆՕՐԵԱՅ ՀԱՆԴԵՍ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

21 ՅՈՒՆԻՍ 1880

ԹԻԻ 2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ Բ. ԹԵՐԹԻՆ

Էջ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ. (Շար.)	17
ԸՆՏԱՆԵԿԱՆ	20
ՏԱՐՐԱՂՈՒԾԱԿԱՆ	23
ՉԱՓՔ ԵՒ ԿՇԻՌՔ	25
ՀԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ. — Օր. Մ. Թ.	26
ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ	27
ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ. (Շար.)	29

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Տարեկան 4 ասկի օսմանեան.

Գաւառաց համար՝ Թղթատարի ծախքն ալ վրան աւելցնելու է.

իւրաքանչիւր Թուոյ գին 400 փարա:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՕՂՈՍԻ ՔԻՐԻՇԱՅԱՆ

ԲԵՐԱ, ՇԻՇԼԻ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 15

ՄԱՌԻՍ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԻՆ ՏԵՄԵՐԱՆԻՔ

ՍԵՐԻԱՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ԵՄԵՐԱՆԻՔ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ԵՄԻՆ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ԵՄԻՆ

ԵՄԻՆ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ԵՄԻՆ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ԵՄԻՆ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ԵՄԻՆ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ԵՄԻՆ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ԵՄԻՆ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ԵՄԻՆ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ԵՄԻՆ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ՔԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՄԵՐԱՆԻՔ

ԾԱՂԿԱՔԱՂ

ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻՑ

ԵՕԹՆՕՐԵԱՅ ՀԱՆԴԵՍ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ

Թ Ո Վ Մ Ա Ս Թ Է Դ Ջ Ե Ա Ն

Ա. ՏԱՐԻ

21 ՅՈՒՆԻՍ 1880

ԹԻԻ 2

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

(Տես թիւ 1, երես 3):

Ուրեմն որ երկիրն ուր ամէն տեսակ օգուտ ու արժէք ունեցող իրերն առատ են, այն միայն հարուստ է ճշմարտապէս, և ոչ թէ աւելի ոսկի և արծաթ ունեցողը: Ի՞նչ բանի կը ծառայէ ոսկին և արծաթը երբ ուրիշ բերքերն, ուրիշ հարստութիւնք պակսին, ինչպէս պատահեցաւ Գալիֆօրնիայի հանքերուն նոր գտնուած ժամանակն, ուր մարդիկ՝ ոսկւոյ հանքերուն քով, հացի կտորի մը կարօտ մնացին:

Յորչափ մարդիկ կը կարծէին որ հարստութիւնը միմիայն ոսկւով և արծաթով կը գոյանայ, այլ և այլ ազգերն ուրիշ նպատակ չունեցան, բայց եթէ մէկմէկու ձեռքէն կորզել այն հազուագիւտ վաճառը՝ որ ըստ իրենց կարծեաց, պիտի հարստացնէր զիրենք. առանց մտածելու թէ ոսկին և արծաթն անգամ երկրի մը մէջ որչափ շատնան, այնչափ արժէքնին կը պակսի, այսինքն մի և նոյն քանակութիւնն ունեցող ոսկւով և արծաթով ամէն տեսակ վաճառքէ աւելի քիչ կրնայ առնուիլ: Եւ այս մետաղներն ամէն կողմէ իրենց երկիրը բերելու համար, ոչ մէկ միջոց չը խնայեցին. որովհետեւ այս էր իրենց գաղափարովն գերագոյն բարիք և բարօրութեան հասնելու միմիայն ճամբան: Ո՞րքան գոտութեանց, բռնաբարութեանց, կռիւներու և արիւնհեղութեանց պատճառ եղած է միայն այս սխալ ըմբռնումը: Տնտեսական գիտութեան մէկ մեծ արժանիքն է այս ծուռ գաղափարը ջրելով ապացուցանելն թէ հարստութիւնը միշտ և միայն

ճարտարութեան, այսինքն աշխատութեան արդիւնքն է, և ամէն օգտակար և արժէք ունեցող իրերն՝ ոսկւոյ և արծաթի պէս հարստութիւններ են. թէ հարստանալու համար հարկ չկայ իր դրացին կամ ուրիշ ազգերը կողոպտել. բաւական է աշխատիլ և խնայել, այսինքն աշխատութեան արդեանց մէկ մասը պահել, որպէս զի անով նոր հարստութիւնք կարենան արդիւնաւորիլ: Մէկ խօսքով, տնտեսական գիտութիւնը ուսոյց աշխարհի որ աշխատութիւնն և խնայութիւնն են միակ աղբերք հարստութեան, թէ ծոյլ ազգերն, ինչպէս ծոյլ մարդիկ, ստացած հարստութիւննին, եկամուտնին վատնողներն անվրէպ դատապարտեալ են աղքատութեան, և թէ ազգ մը, թէպէտ և սակաւաթիւ ըլլայ ուրիշներու նկատմամբ, աշխատութեամբ իր բերքերն աւելցնելով և իրեն աւելորդ եղածներն ուրիշ ազգաց բերքերուն հետ փոխանակելով, շատ աւելի հարուստ կ'ըլլայ քան թէ ուրիշներն՝ որոնք կողոպուտէ և աւարառութենէ ուրիշ միջոց չունին հարստանալու:

Եւ մտածեցէք, Տեարք իմ և Տիկնայք, ինչ ֆնասակար հետեւանք ունէր հարստութեան վերաբերեալ հին դրութիւնն, նկատմամբ մարդկային ազգին բարոյական յառաջագիմութեան: Եթէ ամէն հարստութեան աղբիւրն ստակը սեպելու ըլլայինք, ոսկւոյ և արծաթի քանակութիւնը սահմանեալ ըլլալով, իսկ միւս կողմէ ամէն ազգ, նաեւ ընկերութեանց իւրաքանչիւր անդամն այդ հասարակաց գանձէն իւր հարստութիւնն աւելցնելու համար կրցածին չափ մեծ բաժին մը իրեն հանելու պարտաւորած ըլլալով, ամէն մէկուն ըրած չահը՝ միւսը կորսնցնել հարկ կ'ըլլար: Այսինքն մէկուն ստացած հարստութեան չափ միւսն աղքատնալ պէտք կ'ըլլար: Ըսել է թէ իւրաքանչիւր անհատ, իւրաքանչիւր ազգ հարստանալու համար, պէտք կ'ըլլար որ իր դրացին նոյնչափ ֆնաս կրէր և փոխանակի իր դրացւոյն հարստութիւնն իր կործանմամբը գոյանար: Ցաւալի դրութիւն՝ որով ամէն մարդիկ և ամէն ազգիւք իրարու գէնը, իրարու կործանումը պէտք էին փափաքել: Աշխարհիս քաղաքականութիւնը դարերով այս տըխուր սկզբանց վրայ հիմնուած էր: Տնտեսագէտներն եղան որ նախ և առաջ այս կործանարար դրութիւնը ջրեցին և ապացուցին որ անհատից, ինչպէս և ազգաց մէջ, անոր հակառակն է ճշմարիտը. այսինքն ամէն անհատ իր աշխատութեամբ և խնայութեամբը շարունակ կրնայ հարստանալ. և թէ մէկը հարստանալու համար, միւսներն ալ հարուստ պէտք է ըլլան, վասն զի իրենցմէ մէկը որչափ աշխատի, որչափ բերք և հարստութիւն արդիւնաւորէ, ինչպէս կրնայ վաճառել զանոնք, երբ չորս կողմը միայն աղքատ դրացիներ ունենայ, այսինքն այնպիսի դրացիներ որ իր վաճառքին փոխանակ իրեն տալու վաճառք չունին: Ահա այսպէս հաստատութիւն գտաւ անհատից և ազանց մէջ հասարակական (solidarité) մեծ սկզբունքը՝ ըստ որում մէկուն ֆնասէն միւսներն ալ կը ֆնասուին և մէկուն օգտէն միւսներն ալ օգուտ կը քաղեն, և հետեւաբար ամէնքը հաւասարապէս մէկմէկու օգտին, հարկտութեանն ու յառաջագիմութեանը փափաքող պէտք է ըլլան: Այս գեղեցիկ սկզբունքն է որուն արդիւնքը կրնանք արդէն նշմարել քաղաքակրթեալ ազգաց յարաբերութեանցը մէջ: Այս նոր սկզբան շնորհիւն է որ

քաղաքակրթեալ ազանց մէջ պիտի հաստատուի օր մը, ինչպէս կը յուսանք, այն երազեալ խաղաղութիւնն ու ներդաշնակութիւնն որ այնքան նպաստաւոր է ամէնուն ճշմարիտ և կենսական շահուցը :

Արդէն կրնաք ըմբռնել, Տեարք իմ և Տիկնայք, թէ տնտեսական գիտութիւնն ինչ մեծ կարեւորութիւն ունի՝ մարդկային ընկերութեան նիւթական և բարոյական զարգացման նկատմամբ : Արդարեւ ոմանք բամբասեցին զայն իբր եսականութեան, անձնասիրութեան նպաստաւոր . իբր թէ քաղաքական տնտեսութիւնն լոկ նիւթական շահուց հետ զբաղելով և իրեն հիմն առնելով անձնական օգուտը, ամէն խնդիր նիւթական շահուց խընդրոյ մը կը վերածէ և անձնական շահը՝ բարոյական կամ հանրական շահուց կը վերադասէ : — Յիրաւի ամէն աշխատող մարդու շարժառիթը՝ իւր անձնական օգուտն է . ինքզինքն և իր ընտանիքը պահպանելու, վիճակին բարեւոյցելու փափաքն է : Բայց երբ անձին օգուտը ճշմարիտ ազատութեան սահմանին մէջ կը փակուի, այսինքն երբ ուրիշի ազատութեան չը գտնուի, ընդհանուր օգտին հետ ինքնիրեն կը համաձայնի : Յիրաւի ամէն աշխատաւոր իր արդիւնաւորած բերքերն աւելի գեղեցիկ, աւելի առատ և աւելի աժան հանելու և այս ճամբով ուրիշ արուեստաւորաց յաղթելու, զանոնք գերազանցելու կը նկրտի . բայց իր բոլոր ջանքն ուրիշ նպատակ և վախճան չունին և չեն կրնար ունենալ, բայց միայն իր յատուկ բերքերը միւս նոյն տեսակ բերքերէ աւելի հասարակութեան հաւնեցնել . հասարակութիւնն իսկ ուրիշ շահ մը չունի, բայց եթէ այլ և այլ արուեստաւորաց այս մրցակցութեան շնորհիւ՝ ամէն բերքերու աւելի առատ և աւելի աժան ըլլալը : Այդ մրցակցութեան օրէնքը՝ որ ամէն արուեստից և ճարտարութեանց խրթմանն է, անոնց օր ըստ օրէ կատարելագործութեանը, նորանոր գիւտերու և յառաջագործութեանց աղբիւրն է, միանգամայն և ամէն վաճառքի առատութեան և գնոյն նուազութեան հիմնական պատճառը : Բայց այս մրցակցութիւնը բեղմնաւոր ըլլալու համար, աշխատութեան ազատութեան կարօտ է . նոր սկզբունք մը, բոլորովին անծանօթ հին ազգերուն : Քաղաքական տնտեսութիւնն այս կետէն ալ նկատելով, ամէն մարդասիրական սկզբունց եռանդը տաժող անձանց սիրելի ուսում մը ըլլալու արժանի է : Արդի քաղաքակրթութիւնը հին քաղաքակրթութենէն, նոր ազգերը հինքէն զանազանող ամենէն մեծ սկզբունքը՝ մարդկային անհատից ազատութեան սկզբունքն է : Հին ընկերութեանց տնտեսական վիճակը բոլորովին գերութեան վրայ հիմնուած էր, մինչդեռ արդի տնտեսագիտութեան հիմն աշխատութեան ազատութիւնն է : Նախնեաց տնտեսական վիճակը մէկ ակնարկով ըմբռնելու համար, բաւական է յիշել որ հին Յունաստանի մէջ, մանաւանդ Աթենք և Քիոս կղզին՝ որ գերեաց մեծ վաճառատեղին էր, գերիներուն թիւն ազատ քաղաքացւոց թուոյն եռապատիկն էր, Սպարտայի մէջ 32,000 ազատ մարդու դէմ, 220,000 ստրուկ կար զորս ամէն ազատ Սպարտացի երիտասարդ հրաման ունէր վայրենի անասնոց պէս սպաննելու : Աշխատութիւնն՝ հին ազգաց, Յունաց և Հռովմայեցւոց աշխրին, անարգ բան մըն էր և իրենց ամենէն մեծ իմաստասէրները ճարտարութիւնը կ'անդոսնէին իբր անարժան ազատ մարդկան : Միով բանիւ, աշ-

խատուծիւնը գերութեան նշանակն էր : Ո՛չ միայն առտնին գործոց ամէնը գերիներու յանձնուած էին , այլ բոլոր ճարտարութիւնք և արուեստք գերիներու ձեռքով կը գործուէին՝ զորոնք անասնոց հետ մէկտեղ ջուր խմելու կը զրկէին : Երկրագործութիւնը , նաւաստութիւնը , Ատտիկեայ երեւելի հանքերուն գործաւորութիւնը , վերջապէս այն ամէն վաստակները զորոնք տնտեսական գիտութիւնը հարստութեան աղբիւր կը համարի , բոլոր գերեաց խմբերու յանձնուած էին : Մտաւորական և բարոյական ձիրք անգամ բաւական չէին գերութեան նուաստացուցիչ գրոշմը մարդուն ճակատէն սրբելու : Դիմութենեքի ժամանակ , գիտնական մը ձիու մը չափ արժէք ունէր ու 1000 ֆրանքի մօտ կրնար ծախու առնուիլ :

(Շարունակել)

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԱԳՇԱԼԵԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ԿԱՆԱԶ ԼՈՒԲԻԱՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԿԵՐՊ

Մենք մէջէն կակուղները զատէ , մաքրէ առանց վրանին մանր թելեր ձգելու , քառորդի մը չափ եռացող ջուրի մէջ թող որ ճերմկնան , յետոյ շուտ մը պաղ ջուրի մէջ ձգէ , և երբ բոլորովին պաղին՝ առ չորցուր և կախուած մաղերու վրայ տարածէ զանոնք , որպէս զի աղէկ մը ջուրը վերայէն քամուի : Բայց այս գործողութիւններն ընելու համար՝ պէտք է չոր և առողջ օդ ունեցող օր մը ընտրել , վասն զի այսպէս ճերմկցած բանջարեղէններուն մէջ որչափ աւելի շատ ջուր մնայ՝ այնչափ քիչ կը գիմանան աղաջրոյն (սալամուրա) մէջ :

Պէտք է առաջուրնէ աղաջուրը պատրաստես , որ կը բաղկանայ 3 մաս ջրէ 1 մաս քացախէ և 250 տրամ աղէ ամէն մէկ քաշ հեղուկին համար , յետոյ լուբիաները պտուկներու մէջ չարէ , բայց այնպիսի կերպով մը որ մէջ տեղերնին միջոց չի մնայ , ամանները աղաջրով լեցուր և զանոնք կըր յարկի քարերով դոցէ որպէս զի ջուրին երեսը չեղլեն :

Ասիկա գործածելու համար՝ տաք բայց ոչ եռացող ջրի մէջ ձգելու է կէս ժամու չափ , վերջը պաղ ջուրի մէջ կը ձգուին մինչեւ եփելու ժամանակը :

ՕՐ. Թ. Մ.

ԵՓԱԾ ՄԻՍԸ ԵՐԿԱՐ ԱՏԵՆ ՊԱՀԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Եփած միսը կամ խորոված հաւը հողէ ամանի մը մէջ կարգ կարգ չափէ , այն կարգերը բխտիով (gelée) կամ խորովածին հիւթովը սրսկէ , այնպէս որ ամէն կարգ ամբողջ ծածկուի . ետքը ամանին կափարիչը աղէկ մը դոցէ

և անոր բոլորտիքը թուղթ կամ հայտ փակցուր որպէս զի դուրսի օդը ներս չի մտնէ : Այս կերպով միսը կրնայ երկար ատեն դիմանալ և պէտք եղած ատեն նոր եփուածի պէս գործածուիլ :

ԳԵՏՆԱԽՆՁՈՐ ՊԱՀՅԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Գետնախնձորներն աղէկ պահելու համար, զանոնք կողովի մը մէջ լեցուր և քանի մը վայրկեան եռացեալ ջուրը ձգէ, ետքը մաղի մը վրայ տարածէ, արեւին չորցուր և վերնայարկդ պահէ :

ՕՐ. Ե. Թ.

ԲՈՒՐԴԵՐՆ ԵՒ ՄՈՒՇՏԱԿՆԵՐԸ ՑԵՅԷ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Թղթէ թերթերու վրայ բարակ խաւ մը բեւեկնի խէժի իւղ քսէ, և այն թերթերուն միւս կողմը դարձնելով ցեցէն բռնուած հագուստները և կարասիները վրան դիր. խկոյն այս միջատները կը հեռանան :

Կրնաս մուշտակները կամ բուրդէ կերպրանները, նաեւ զիրենք պարունակող դարակներն և սնտուկները բեւեկնի խէժով ցօղել : Կերպրանները եթէ օդին հանեա՝ այս նիւթին անհաճոյ հոտը կը ցնդի :

ԲՈՒՐԴԸ ԻՆՁՊԷՍ ՄԱԲՐԵԼՈՒ Է ՄԻՋԱՏՆԵՐԷՆ

Դիր 8 քաշ եռացեալ ջուրի մէջ 300 տրամ պաղլեղ (alun) նոյնչափ ալ գինեմրոյ հիւթ (crème de tartre) և 20 քաշէ աւելի պաղ ջուրի մէջ լեցուր զանի. բուրդդ այս հեղուկին մէջ թաթխէ և քանի մը օր ձգէ. ետքը հանելով լուս և չորցուր, այն ատեն ամենեւին միջատները չեն դար :

ԹԱՐՄ ՄԻՍԸ ՍԱՍՏԻԿ ՏԱԲՈՒԹԵԱՆ ԱՏԵՆ ՊԱՀՅԵԼՈՒ ՄԻՋՈՑ

Սաստիկ տաքերուն, միսը նեխութենէ պահպանելու համար՝ մածուկնի կամ մակարդի մէջ թաթխէ. կը կակուղնայ և աւելի կը դիմանայ :

Կրնաս նաեւ միսը քացախի մէջ 48 ժամ ձգելով թրջել : Թէեւ այս միջոցով միսերը կ'աղեկնան, սակայն բարկ համ մը կ'առնուն որ կրնայ շատ մարդոց անախորժ ըլլալ : Առջի ըսած կերպերնիս նախամեծար է :

ՓԱՅՏԸ ՍԵՒ ՆԵՐԿԵԼՈՒ ԿԵՐՊ

Առ կոտրտած Պրէզիլի փայտ (մօր պաքամ՝ bois de Brésil) և ջուրի մէջ եռացուր զայն քառորդի մը չափ. վերջը ներկելու փայտդ 3 անգամ այս հեղուկին մէջ թրջելով չփէ, և ամէն անգամուն զատ զատ չորցուր : Յետոյ հետեւեալ կերպով պատրաստուած քացախին մէջ վրձինը թաթխէ՝ թրջէ փայտը և զայն չփէ : Դիր 60 կրամ քացախի մէջ պողպատի կամ երկաթի 30 կրամ խարտած, բոլորը սրուակի մը մէջ լեցուր, և 2 ժամու չափ կրակի քով դնելէ վերջը՝ քացախը կամաց մը ուրիշ ամանի մը մէջ պարպէ (décanter) պէտքիդ գործածելու համար :

ԿՈՏՐԱԾ ԱՄԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՍՈՍԽՁ

Հողէ աման մը կոտրտելով ամենամանր փոշոյ վերածէ, և հաւկթի ճերմկուց ալ աւելցուր՝ քիչ մը տաք կիրով : Աս բաղադրութեամբ կոտրած ամանները շատ հաստատուն կերպով իրարու կը յարին :

ՕՐ. Թ. Մ.

ԼՆՏԱԳԱՐԻ (scorbut) ԴԷՄ ՕՇԱՐԱԿ

- 100 կրամ գրգալախոտի տերեւ (cochlearia)
 100 » Զրկոտիմնի տերեւ (cresson)
 100 » Զրային առւոյտի տերեւ (ménianthe)
 100 » Բողկի արմատ (raifort)
 100 » Դառն նարինջ (orange amère)
 3 » Կինամոմոն (cannelle)
 400 » Ճերմակ գինի

Ասոնք ամէնը անկանի մը մէջ ծեծէ, ծեծուած նիւթը ճերմակ գինւոյ հետ մէկտեղ թորանոցի (alambic) ի մը մէջ դիր և 24 ժամ թող որ թրջի, վերջը 100 կրամ ըմպելի զտէ, ասոր մէջ 100 կրամ շաքար դիր որով ոշարակ մը կ'ըլլայ և զայն մէկգի թող:

Ուրիշ տեղ մը, թորանոցին մէջ մնացած բուսածուրը մղէ, մէջը 210 կրամ շաքար աւելցուր, և կ'ըլլայ 30° եռացեալ ոշարակ մը: Յետոյ երկու ոշարակներն իրարու խառնէ:

ՍԵՐԿԵԻԼԻ ՕՇԱՐԱԿ

- 100 կրամ սերկեւիլի մաքուր հիւթ
 188 կրամ ճերմակ շաքար առ, պորղ լուծմամբ ոշարակ մը շինէ և նեղ բերան գաւաթի մը մէջ մղէ՝ անգամ մը միայն եռացնելով:
 Կեռասի, հաղարջի, մորի ոշարակները նոյն կերպով կը շինուին:

ԹՈՒԹԻ ՕՇԱՐԱԿ

- 2 մաս բոլորովին չհասունցած թութ
 8 մաս ճերմակ շաքար առ, թութերը ձեռքովդ ճմլէ, այս վիճակին մէջ երկու կամ երեք օր թող որ հանգչի և յետոյ մամլոյ տակ դիր հիւթը առնելու համար, այս հիւթը պահէ և երբ որ պէտք ունենաս զայն գործածէ և կամ եթէ կ'ուզես ոշարակ շինէ իւր ունեցած շաքարին կրկինը լուծանելով:

ԽԻԺԻ ՕՇԱՐԱԿ

- 1 մաս ճերմակ կուէզ (gomme arabique)
 1 » թորուած ջուր
 8 » շաքարէ ոշարակ
 Երկու անգամ խիժը լուա և իրեն կշռոյն կրկինն ունեցող պաղ ջուրի մէջ քանի մը վայրկեանի չափ զայն կակուղցուր, վերջը թորուած ջուրին մօտեցուր և լուծումը դիւրացնելու համար զայն ատեն ատեն շարժէ:
 Տնկոյ հիւթը առանց ճմլելու ճերմակ լաթէ մ'անցուր, զայն շաքարէ ոշարակին հետ խառնէ և մինչեւ 29° օդաչափ եռացեալ եփէ:
 Երբ խիժը տաքէն հալի, ոշարակը նուազ հեղուկ կ'ըլլայ:

ՕՐ. Ս. Մ.

ՏԱՐՐԱԼՈՒԾԱԿԱՆ

ՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԻՈՐԱՅ ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔ

Ջ Ր Դ Ե Ղ Ք

(Շարունակութիւն տես քիւ 1. երես 11.)

ՏԱՐԱԶ Է.

ի պէտս Բ, Գ, Դ և Ե տարազներուն տրամադրած առարկայից

Աւթօլ 40°	1 լիտր կամ 1000 կրամ
Ջնարակ	300 »
Դոճի խէժ	70 »
Կոլոփան	150 »
Բեւեկնի խէժ (վենետկոյ)	225 »

Նախ ջնարակը, դոճի խէժը և կոլոփանը աւթօլին մէջ խառնէ և ջերմութեան ցրցուր . խէժերը հալելէն ետեւ բեւեկնի խէժն աւելցուր :

Եթէ կ'ուզես միանգամայն կարմիր գոյն մ'ալ տալ ջրդեղելիք առարկայից, այն առեն դոճի խէժը քիչ մը աւելի, ջնարակը քիչ մը նուազ, և հարկ եղածին չափ աղբրաց արիւն ⁽¹⁾ (sang de dragon) աւելցուր :

ՏԱՐԱԶ Ը.

Կահենի (acajou) կոչուած փայտէ՝ ինչպէս նաեւ վարդենուց և սալորենուց փայտերէ շինուած կահ կարասեաց համար :

Աւթօլ 40°	1 լիտր կամ 1000 կրամ
Ջնարակ	125 »
Դոճի խէժ	62 »
Մազտաքէ	31 »
Կընդրուկ կայլակակերպ (benjoin en larme)	31 »
Բեւեկնի խէժ (վենետկոյ)	62 »
Ապակուց կոտրտուք	125 »

Դոճի խէժը և ջնարակը այս ջրդեղին դիմացկունութիւնը կ'աւելցունեն . Գունաւորելու համար, հարկ եղած չափով քրքում (safran) կամ աղբրաց արիւն աւելցուր :

ՏԱՐԱԶ Թ.

Ոսկուց կամ ոսկենման գոյն տալու համար, ՚ի պէտս արդյրէ (laiton) ⁽¹⁾ առարկայից :

(1) Ռետինակերպ մարմին, արեան պէս կարմիր, դիւրահալ թէ Աւթօլի, թէ Էթերի և թէ ուրիշ լիւծիչ հեղուկներու մէջ .
(2) Բաղադրութիւնն է պղինձ 63 մաս, զինկո 36. ամենափոքր մաս մ'ալ կապոր և անագ .

Աւքօլ	1 լիտր կամ	1000 կրամ
Դոճի խէժ (ճերմակ տեսակէն)	150	»
Խիժակաթ (gomme gutte)	150	»
Աղբրաց արիւն	150	»
Հրուկ ⁽¹⁾ (rocou կամ roucou)	150	»
Քրքում	32	»

Նախ վերջին չորս նիւթերը զատ զատ շիջելու մէջ դիր, իւրաքանչիւր շիջին մէջ ըստ բաւականին գինւոյ ոգի (Esprit-de-vin) աւելցուր ու թող 15 օրուան չափ արեւու մէջ. երբեմն երբեմն շիջը ցնցելով հալեցումը դիւրացնելու համար : Եթէ արեւ չըլլայ՝ կրակին մօտ տեղ մը դիր առանց շատ մօտեցունելու վառն դի կրակին ջերմութիւնը եթէ չափազանց ըլլայ՝ ներկին գեղեցկութիւնը կը կորսուի, արեւուն ջերմութիւնն աւելի գեղեցիկ գոյն կ'արտադրէ :

Արդ Դոճի խէժը Աւքօլին մէջ հալեցունելէն վերջն այս պատրաստուած ներկերէն աւելցուր ջրգեղին մէջ ուզած չափովդ :

Այս ներկերէն առաւել կամ նուազ դնելով՝ ոսկւոյ դեղնագոյն կամ կարմրագոյն զանազանութիւնները կ'ունենաս :

Եթէ արծաթեայ մարմնոյ մը կ'ուզես ոսկւոյ գոյն տալ, վերոյիշեալ չորս գոյներէն առատապէս խառնելու է ջրգեղին մէջ :

ՏԱՐԱԶ Ժ.

Իւզաներկ պատկերի համար :

Տամարայի խէժ (gomme dammar)	500 կրամ
Քափուր	40 »
Բեւեկնի խէժի իւզ	1000 »

Տամարայի խէժը պէտք է շատ ճերմակ, թափանցիկ, լաւ մաքրուած և փխրուն (friable) տեսակէն ըլլայ :

Լաւ հալեցնելու համար պէտք է ամէնը մէկտեղ միահալոյն խառնել, այլ մաս առ մաս պատրաստելու է, հետեւեալ կերպով :

Տամարայի խէժէն փոքրիկ մաս մը՝ օրինակի համար 100-150 կրամի չափ առնելով սանդի մը մէջ դնելու է ու յետոյ բեւեկնի իւզէն 200-250 կրամ (կամ 'ի հարկին աւելի եւս) վրան աւելցունելով լաւ մը խառնելու է մինչեւ որ խէժը հալի. հալած մասը յարմար շիջի մը մէջ առնելու է. մնացած մասին համար սոյն կերպը կրկնելու է քանի մը անգամ : Ամենէն վերջը քափուրն աւելցունելու է որ շատ դիւրաւ կը հալի : Քափի մը օր (3 օր) այս շիջը՝ որուն բերանը անշուշտ գոյ պիտի ըլլայ՝ անշարժ պէտք է մնայ, միայն 5-6 ժամ մէջ մը, փայտեայ մաքուր դաւաղանաւ մէկ վայրկենի չափ խառնելու է որպէս զի ջրգեղին թանձրութիւնը միօրինակ ըլլայ :

Քանի մը օր այսպէս կենալէն վերջը՝ ջրոյ պէս յստակ և թափանցիկ ջրգեղ մը կըլլայ որ շատ յարգի է նկարչաց համար :

(1) Կարմիր և սակաւ ինչ իւզային կակուզ ներկ մը որ Հարաւային Ամերիկայէն կ'եկէ :

ՏԱՐԱԶ ԺԱ.

Մետաղեայ և սակրեայ առարկայից սեւ գոյն տալու համար :

Քօրալ (կէս կարծր, demi-dur) 120 կրամ

Նաւթ (bitume de gùède naturel) 50 »

Կառաւառի իւղ (huile de lin siccative) 120 »

Բեւեկնի իւղ 240 »

Նախ քօրալը առանձին հալեցուր, յետոյ մաս առ մաս նաւթը աւելցուր, յետոյ իւղը, ամենէն վերջը բեւեկնի իւղը :

Գ. ԱՊՏՈՒԼԼԱՀ

ՉԱՓՔ ԵՒ ԿՇԻՌՔ

Մեր խոսաման համեմատ կը փութամք առաջիկայ թերթէն սկսեալ մասն առ մասն հրատարակել զլիսաւոր ազգայ չափուց և կշռոց ցուցակները :

ԱՆԳՂԻԱ ԵՒ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՔ ԱՄԵՐԻԿՈՅ

Երկայնութիւն. - Եարտա. ունի ոտք (ֆուդ) 3, ոտքը՝ բութ (ինչ) 15 և բութը՝ գիծ (լայն) 10 :

Բութ - Inch = մէդր 0.02531

Ոտք - Foot = » 0.30479

Եարտ - Yard = » 0.91438

Ֆէտհըմ (2 եարտ) - Fathom = » 1.82877

Բոլ կամ բէրչ (5 1/2 եարտ) Pole կամ perch = » 5.02911

Ֆէրլըն (220 եարտ) Furlong = » 201.16437

Մղան, մայլ (1760 եարտ) Mile = » 1609.3149

Միլիմետր. - Քառակուսի եարտ. ունի քառակուսի ոտք 9, քառակուսի ոտքը՝ քառակուսի բութ 144 և քառակուսի բութը՝ քառակուսի գիծ 100 :

Ք. ոտք = ք. մէդր 0.0929

Ք. եարտ - Yard carré = » 0.8361

Ռօտ (30 1/4 ք. եարտ) Rod = » 25.2919

Ռուտ (1210 ք. եարտ) Rood = » 10.1168

Էդր (4840 ք. եարտ) Acre = » 40.4671

Ընդհանրութիւն. - Կէլլըն (277.27384 խոր. բութ). ունի քուարդ 4 և քուարդը՝ բայնդ 2 :

Բայնդ - Pint = լիդր 0.5679

Քուարդ - Quart = » 1.1359

Կէլլըն - Gallon = » 4.2434

Քէք (2 կէլլըն) - Pech = » 9.0869

Պըշըլ (8 կէլլըն) - Bushel	=	լիգր	36.3477
Սէք (3 պըշըլ) - Sach	=	»	1.0904
Քուորթըր (8 պըշըլ) - Quarter	=	»	2.9078
Չէլտրըն (12 սէք) - Cheldron	=	»	130.851

Կշէ - - Անգղիական կշիռները տուրեւառութեան երկու տեսակ լիպ-
րայից կ'ամբիովուին . առաջինը կ'ըսուի դրոյ բառնդ . իսկ երկրորդը՝ է-
վէնտիուբոյզ բառնդ :

Ա. Դրոյ բառնդ կամ լիպրա դրոյ . ունի ունկի (աւնս) 12 . ունկին՝
մանրակշիռ (բէնիուայդ) 20 և մանրակշիռն՝ ցորեան (կրէյն) 24 :

Յորեան - Grain	=	կրամ	0.0648
Մանրակշիռ	=	»	1.5552
Ունկի - Unce	=	»	32.1035
Լիպրա դրոյ (5760 ցոր.) - Livre troq	=	»	373.2419

Բ. Էվէնտիուբոյզ բառնդ կամ լիպրա էվէնտիուբոյզ . ունի ունկի 16
և ունկին՝ տրամ 16 :

Տրամ - Dram	=	կրամ	1.7718
Ունկի - Unce	=	»	28.3495
Լիպրա էվէնտ . (7000 ցոր.)	=	»	453.5926
Քուինտէլ (112 լիպրա) - Quintal	=	հզրկրամ	50.802
Դոն (20 քուինտէլ) - Ton	=	»	1016.048

ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԷ ՄԱՐԳԱՐԻՏ

Տաճկաստանը մեծ առուտուր մը կ'ընէ բաղադրութենէ մը որ
ՎԱՐԴԷ ՄԱՐԳԱՐԻՏ կ'ըսուի : Այս պարզ բաղադրութիւնը նմանցնելը շատ
դիւրին է : Ա՛ռ թարմ վարդի տերեւներ և աղէկ մաքրուած երկաթածոյլ
ամանի մը մէջ խնամքով ծեծէ մինչեւ որ հայս մը ձեւանայ : Այս հայսը եր-
կաթէ թիթեղի վրայ տարածէ օդին մէջ չորցնելու համար : Երբոր հայսդ
քիչ մը խոնաւութիւնը քաշէ և չորնալու մօտենայ , ան ատեն դարձեալ
վարդի ջուր դնելով ծեծէ և նորէն չորցուր :

Գործողութիւնդ կրկնէ մինչեւ որ հայսդ բարակնայ . ան ժամանակ ու-
ղած ձեւդ կրնաս տալ թէ մատերովդ և թէ այնպիսի մեքենայով մը որ
դեղահատները կտրելու համար գործածուած մեքենային կը նմանի :

Վերջը հայսդ ծակէ այնպէս որ կարող ըլլաս ձեւացուցած մարգարիտ-
ներդ ժապաւէնի անցնել և ետքը դարձեալ չորցուր՝ որ ան ատեն շատ
կարծր կ'ըլլայ : Երբոր մարգարիտներդ աղէկ յղկուած և միացած են՝ վար-
դի իւղով չիֆէ անոնց աւելի հոտ և փայլ տալու համար :

Այս պարզ հնարքով վարդին տերեւներուն հայտը սեւ գոյն կ'առնու որն որ տեսակ մը գլխորտկան (acide gallique) թթուատէ առաջ կուգայ որ վարդերուն մէջ երկաթին հետ կը խառնուի :

Շատ անգամ Տաճկաստանի մարգարիտները աւելի հոստուէտ ընելու համար վարդի իւզով՝ ստաշխով՝ (storax) մուշկով (musc) կը խառնեն :

Այս յաւելումածը հայտը պատրաստելու կերպին փոփոխութիւն մը չընեն :

Այս մարգարիտներն ամենէն շատ փնտռուածներն են : Կամ անոր համար որ տիկնոնց զարդ ըլլալու սահմանեալ ըլլալով, անոնց գոյնը իրենց մորթին ճերմակութիւնը աւելի կը փայլեցնէ, կամ անոր համար որ անոնց անուշահոտութիւնն աւելի ախորժելի է :

ՕՐ. Մ. Թ.

ԿԵՆՒՄԱՆԱՐԱՆԱԿԱՆ

ԷՆԿԻՐԻԻԻ ԱՅԾԸ ՅԱՄԵՐԻԿԱ

Ամերիկայի լրագիրք մեծ կարեւորութիւն մը կուտան նոր տարավարժութեան (acclimatation) մը որուն ամենամեծ ապագայ մը սահմանուած է . այս իսկ է կուտաւորուր կղզւոյն մէջ Էնկիրիւիւիւայծին բոյծը (eleve) :

Կուտաւորուր կղզին Մեքսիկեան Քալիֆօռնիային արեւմտեան եզերքէն 250 ի չափ հազարամեզը հեռաւորութիւն ունի : Միացեալ Նահանգաց մէջ կազմուած և 1873 Յունուար 23 ին վաւերացուած ընկերութիւն մը գընեց զայն : Այս ընկերութեան միակ նպատակն է գեղմնաւոր այծերը շատցնել թէ զուտ Անկորայի ցեղովը, թէ խառնուրդի միջոցաւ տեղացի ցեղը բարւոքելով : Այս ընկերութեան աշխատութեանց և արդեանց վրայ հետեւեալ տեղեկութիւնները կը կարգանք Նիւ Եօրքի Ֆրէնչ Եւ Սթրէյ ին մէջ :

Իւր կղզւոյն տէր ըլլալուն պէս՝ այս ընկերութիւնը Էնկիրիւիւ ընտիր նոխազներու խումբ մը բերել տուաւ՝ տեսնելու համար թէ ասոնք բնիկ այծերուն հետ զուգեւելով գեղմնաւոր անհատներ կրնա՞ն արտադրել :

Նախ ըսելու ենք թէ կուտաւորուր կղզին գնուած ժամանակն ալ բազմաթիւ այծեր կը պարունակէր : Նախընթաց հինգ տարիներուն մէջ 32000 այծ մորթուած էին միայն իրենց ճարպին և մորթին համար, և դեռ 20000 հատի չափ կը մնար : Այս քսան հազարին կէսը՝ որ արու են՝ պիտի մորթուին՝ անգեղմն անհատներու սերումը դադարեցնելու համար : Սնացեալ տասը հազար էգերը պիտի պահուին առաջին կարգի Անկորայի նոխազներու հետ զուգուելու համար :

Այս խառնածնաց արժէքին գալով՝ արդէն փորձով յայտնի է : Երրորդ խառնուրդը որոյ $\frac{7}{8}$ Անկորա են՝ շատ պատուական գեղմով այծեր կուտայ : Խառնուրդը հեազհետէ կրկնուելով, տարակոյս չկայ որ Անկորայի արիւնը

երթալով աւելի պիտի յաղթահարէ . բնիկ ցեղը ջնջելով՝ ինքն անոր տեղը պիտի բռնէ , և Ամերիկան այսպէսով Ասիոյ գեղեցիկ այծին տէր պիտի լինի :

Այս վաստակն ընելու գիտամարմն մեծամեծ ջանքեր կ'ըլլան երկար ժամանակէ հետէ : Ասկէ տասներկու տարի առաջ արդէն յաջողած էին Անկորայի այծը Միացեալ Նահանգաց մէջ ծնուցանելու , և այն ժամանակէն 'ի վեր փորձեր կ'ըլլային խաղաղական Ովկիանոսին եզերաց վրայ զայն բազմապատկելու : Այս կենդանին բաց 'ի իւր գեղման մեծ արժէքէն իւր զարմանալի բեղմնաւորութիւնն ալ չկորսնցունէր ֆալիֆօրնիոյ կլիմային տակ . հոն ալ իբրեւ իւր բնիկ երկրին մէջ՝ կորովի և վայրասէր է :

Եթէ Կուատալուք Այլէնտ ֆոմքէնիին շահն ուզենք այժմ իմանալ , տարեկան աճումը 26 առ հարիւր ենթադրելով՝ որ իրօք ֆալիֆօրնիոյ մէջ եղածէն շատ նուազ է այծերուն համար՝ կը տեսնենք որ 500 բնիկ այծ՝ և մէկ քանի Անկորայի նոխազ՝ տասը տարի վերջը կը ներկայացնեն միսը՝ ճարպը , ծնունդները , մանաւանդ թանկագին գեղմերը համբելով՝ 2,270,990 Անգլիական ոսկի՝ որ է իբրեւ 247,000,000 դահեկան : Արդ կղզւոյն մէջ ոչ եթէ 500 այլ 10000 էն աւելի այծ կայ՝ որոյ վրայ աւելցուցած են նաեւ 1000 ի մօտ Անկորայի այծեր՝ բոլորն ալ ամէնէն զուտ արիւնէ . և հետզհետէ բազմութիւ նոխազներ՝ ամէնքն ալ ընտրեալ իբրեւ մատակախազ (étalons)՝ հասնելու վրայ են . մինչեւ ցարդ հարիւրաւորներ կան , և քիչ ատենէն աւսոնց թիւը բաւական պիտի չափնայ և կարելի պիտի ըլլայ բնիկ այծերը բոլորովին անհետ ընել :

Գործին ապագային գալով՝ շատ ընդարձակ է : Կուատալուք կղզին այծերու յարմար անսահման արօտավայրեր ունի , գոնէ 166,000 կալի չափ խոտաւէտ երկիր մը՝ որ խաղաղականին դրախտը կը համարուի : Այս ահագին միջոցը կրնայ 75,000 այծ մնուցանել : Անկորային սնունդը հոն ալ բնիկ այծէն աւելի սուղ չէ , այսինքն գրեթէ ոչինչ . մեծ՝ գեղեցիկ՝ կորովի է , և շատ կը ծնանի , և իւր ցեղակցաց վրայ անհամեմատ առաւելութիւն մ'ունի որ է իւր գեղեցիկ գեղմը :

Այսպէս ահա գործ կը տեսնեն Ամերիկայի մէջ :

Հ. ՏԵՕ ԼԱ ՊԼԱՆՇԵՐ

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

ՄՈՐԹԻ ԵՐԿԱՐԱՏԵՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԷՄ

ԱՊԱՀՈՎ ԵՒ ՊԱՐՁ ԴԵՂ

Մորթի տարեւոր հիւանդութիւնն ուր որ ալ ըլլայ , ափիդ մէջ կաղիւնի մեծութեամբ աղէկ փոշիացած կրային ծծումբ լեցուր :

Մի քանի կաթիլ ուտելու ձէթ աւելցուր վրան :

Առաւօտ և երեկոյ մէկ քառորդի չափ ավերդ մէկմէկու շփէ, արտաւոր տեղը օծէ, յետոյ նուշի փոշիով կամ ցորենի թէփով չորցուր և վերջապէս լուացուէ. ծրծելու համար քառորդ մը բաւական է: Այս դեղն որ քսան և հինգ տարիէ 'ի վեր միայն ամէն տեսակ ուրգիւններու դէմ գործածուած է, և որ միշտ յաջողած է:

Ասկից առաջ ալ քոսի համար առաջին դեղն էր ոչ միայն մարմնոյն վրայ՝ այլ և բերնին մէջ կոկորդին խորն եղած զանազան տեսակ վերքերու համար երկար տարիներէ 'ի վեր՝ ամէն դեղեր փորձելէն յետոյ՝ այս պարզ ճանքով ամբողջապէս բուժուած են: Նոեւ Բոլոնեայի մէջ հերալտ (plique) ըսուած հիւանդութեան դէմ յաջող փորձն եղած է:

Կը կարծեմք որ նաեւ այս չիմամբ ուրիշ շատ հիւանդութիւններ կըրնան ամօքիլ, բայց մենք կ'ուզեմք հոս ամենէն աւելի փորձուած և ապահով եղածներու վրայ խօսիլ: Բորստութեան դէմ ալ շատ օգտակար է:

Այս չիմամբներն ուրիշ անտեղութիւն չունին, բայց միայն օրն երկու անգամ՝ երբեմն ալ երկայն ատեն կրկնելու նեղութիւնը. բայց ամէն դեղերն ալ գրեթէ այն անտեղութիւններն և երբեմն ասկից աւելիններն ալ կրնան ունենալ առանց անոր օգուտներն ունենալու:

Այս դեղն ընելու միջին տեւողութիւնը 6-8 ամիս է, բայց երբեմն երկու տարիէն ամբողջ բժշկութիւն զտնուած է և երբեմն 18 օրէն:

Ամբողջապէս բուժուելէն առաջ շատ անգամ աղէկութիւն կամ գէշութիւն կը տեսնուի, բայց աղէկութեան նշաններն երթալով կ'աճին և գէշնալու նշաններն՝ կամաց կամաց կը նուազին: Շատ հեղ դեղը սկսելու ատեն գէշութիւնը շատ կ'աւելնայ, բայց ինչ որ ալ ըլլայ՝ բժշկութիւնը վերջապէս կը հասնի:

Հիւանդութեան ետ դառնալը շատ դժուար է, հիւանդութիւնն ամբողջապէս անցնելէն վերջը՝ քանի մը շաբաթ եւս դեղը շարունակելու է:

Գաղջ և պարզ ջրոյ բաղնիքն այս դեղին օգտակար է, սակայն անհրաժեշտ չէ:

Ապրելու կերպին և կանոնին գալով՝ ամէն մարդ կը մակաբերէ արդէն և դատողութեան ցուցածէն աւելի բան պէտք չէ. ծծումբին հոտը անհանգստութիւն չտալու համար՝ յաճախ ճերմակեղէն փոխելու և բաղնիք երթալու է:

Այս դեղին յաջողութեանն համար ամենէն աւելի պիտանի եղողը յառատեւութիւնն է:

րիններուն մէջ երթալով ռուդոլֆինը կը հաստատուի, ու վեց եօթը սա-
րեկան տղայ մը աւելի հաւանականութիւն ունի ապրելու, քան թէ ուրիշ
հասակի մէջ: Տղան ասկէ ետեւ կամաց կամաց կը մեծնայ ու պատանե-
կութեան հասակը կը հասնի:

Մարդկային հասակին այս երկրորդ ժամանակը տասնուչորս տարուինէ
կը հաշուի. վասն զի մարմինն աճման գործողութիւնը մեծաւ մասամբ կա-
տարած կ'ըլլայ: Կան պատանիներ որոնք տասնուչորս, տասնուհինգ տար-
ուինէ ետեւ ալ չեն կրնար աճիլ, կան ալ որոնց աճումը մինչեւ 22 կամ
23 տարի կը տեւէ: Այս ժամանակիս մէջ հասարակօրէն մարմինը նեղ ու
բարակ, սրունքներն ու ոսկրները նուրբ կ'ըլլան. բայց վերջէն կամաց կա-
մաց մկանունքներն (muscle) երեւան կ'ելլեն, անդամներն աւելի կլորու-
թիւն մը կ'առնուն, այնպէս որ մարդը մինչեւ իր երեսներորդ տարուան
հասակն իր աճման կատարելութեանը կը հասնի:

Աղէկ կազմութիւն ունեցող մարդու մը մարմինը կլորածեւ քառակուսի
մը պէտք է ձեւացնել, մկանունքն որոշ պէտք են տեսնուիլ, գծագրութիւ-
նը նուրբ գծուած, իսկ երեսին գծագրութիւնը կենդանութիւն մը պէտք է
ունենալ:

Կնոջ մարմինն աւելի կլորածեւութիւն մ'ունի, մկանունքը քիչ կ'երե-
ւան, գծագրութիւնն աւելի կլոր կըլլայ, իսկ երեսին գծագրութիւնը փա-
փուկ:

Կանայք արանցմէ կանուխ կատարեալ աճման աստիճանը կը հասնին:
Հասարակօրէն կին մը 20 տարուան կատարեալ կերպաւորման աստիճանը
կը հասնի. ուր որ այրը իր 30 տարուան հասակին մէջ կը հասնի:

Այրութեան տարիքը մարդուս կենաց ամենէն գեղեցիկ ժամանակն է:
Նոյն ատենը մարդս իր զօրութիւնն ու կարողութիւնը կատարելապէս ստա-
ցած կ'ըլլայ: Այս հասակին մէջ անոր վրայ Արարչին պատկերը կը տեսնուի.
Գլուխը կանգուն բռնած կը շրջի. իր բոլոր կազմուածքը կը ցուցնէ որ ա-
րարածոց վրայ իշխելու համար ծնած է: Իր դէմքն ու աչուրները դէպ ի
երկինք ուղղուած են, ու երեսին վրայ արժանապատուութեան ու մեծ-
վայելչութեան նկարագիրը դրոշմուած է: Իր երեսին վրայ ոգւոյն կարողու-
թիւնը կը փայլի, ու գործարանաց ամէն մէկն իր բնութեան ազնուութիւնը
կը ցուցնէ: Այս հասակին մէջ մարդ շատ աւելի կը խորհի: Իր ոգին հա-
սուն է, ու իր որոշմանցը մէջ հաստատուն: Իր ոգւոյն թէ հանդարտու-
թիւնն ու թէ անհանգարտութիւնը հայելոյ մը պէս իր երեսին վրայ կը
տեսնուին, այնպէս որ իր ամէն միտքութիւնները ամենայն ճշգրութեամբ ու
բարակութեամբ անոր վրայ գծագրուած են: Գլխաւորաբար աչուրները աս
ամէն բան հաւատարմութեամբ կը յայտնեն:

Մարդս միայն քիչ մ'ատեն աս կատարելութեան վիճակը կը վայելէ:

Ասոր կը յաջորդեն կամաց կամաց տկարութիւններ, ժամանակը սա-
կաւ առ սակաւ մարմնոյն զօրութիւնը կը բառնայ ու ծերութիւնը կը մեր-
ձենայ:

Երբոր մարմինը թէ երկայնութեամբ ու թէ լայնութեամբ իր կատարեալ
մեծութեանը կը հասնի, երբոր մարմնոյն ամէն մէկ մասը պատշաճ կերպա-

ւորութիւնը կ'ընդունի, անկից ետքը կը սկսի կամաց կամաց մտաւ, եղտաւ ու դեր ըլլալ: Աս կերպ աճման սկզբնաւորութիւնը միանգամայն մարդկային կատարելութեան տկարութեան սկիզբն է. որովհետեւ տա աճման վիճակին հասնելէն ետքը աճելէն ալ կը դադրի, և անոր տեղ միտը կը սկսի աւելնալ ու պարարտանալ կամ թէ ըսենք զիւնալ, որն որ մարմինը աւելի կը նեղէ, առանց ուժովցնելու: Մարմնոյն կամաց կամաց տկարանալը 'ի սկզբան անզգալի է, բայց այսու ամենայնիւ նշաններէն կ'երեւայ: Եթէ մեր վրայ ազէկ մտադիր ըլլալու ըլլանք և ինքզինքնիս չը խտրելու ըլլանք, առ տկարութիւնը ներքին փոփոխութիւններէն ու նշաններէն աւելի ազէկ կրնանք իմանալ: Ինչու որ դործունէութիւնը կամաց կամաց կը սկսի նուազիլ, անդամները ծանրանալ. վասն զի կուճիկներն ու մկանունքները կը կարծրանան ու դիւրութեքութիւնը կը կորսնցնեն: Միանգամայն մորթը կը սկսի քաշալիլ ու խորշովիլ, մազերը կը ճերմկան, տկուտները կը թափին, գէմքը իր մինչեւ հիմա ունեցած ձեւը կը կորսնցնէ, ու կռնակը կորսնալու կը սկսի: Աս նշանները քառասուն տարւոյնէ յառաջ արդէն կ'երեւան, ու մինչեւ վաթսուներորդ տարին երթալով կ'աճին, իսկ մինչեւ եօթանասներորդ տարին աւելի կը շատնան: Եօթանասներորդ տարիքէն կը սկսի ալ տկար ծերութեան վիճակը, զօրութիւնը շատ աւելի չուտ կը նուազի, այնպէս որ մարդը վերջապէս տղու մը պէս անճարակ ու անօգնական է, ու 90 կամ 100 տարեկան ըլլալուն պէս՝ մահը մարդուս կենացը վերջ կուտայ: Աս բնական կերպով մեռնիլը, չէ թէ մինակ մարդու ու անասուններն ունին, հապառ նոյն իսկ տունկերը: Ստիկոյ ամէն անցաւորաց բախտն է, որ մէ որ պէտք չէ վախնալ: Երբոր մարդու խելօք ու աւաքինի տպրած է, պէտք չէ մահաւոյնէ զարհուրի:

Մարդկան ցեղերը իրարմէ զանազանող զլիսաւոր պատճառներն են կլիմայի զանազանութիւնը և տարբեր սնունդը կամ կերակուրը, և այլ և այլ սովորութիւնները:

Կլիման երկրիս վրայ եղող ազգաց զանազան գոյն ունենալուն զլիսաւոր պատճառն է: Մնունդը մարմնոյն կազմութեան ու ձեւին վրայ մեծ ազդեցութիւն կ'ընէ, ու դժադրութիւնն ալ ազգաց այլ և այլ սովորութիւններէն շատ մեծ կախում ունի, որոնցմէ ամենք սովորութիւն ունին քիթը ճզմելու, ականջներն և կամ արտեւանունքը կարճեցնելու և այլն: Բայց ամենէն աւելի զարմանալի ու միաներէն տարբերող ցեղը սեւերունն է, որն որ սեւ գոյնով է, թանձր ու կախաւած պրկունկներ, տափակ քիթ ու գեղմանման մազեր ունի:

(Շարունակել)

ԱՐՏՕՆԱՏԷՐ - ՏՊԱԳՐԻԶ

ՊՊՂՈՍ ՔԻՐԻՇՃԵԱՆ

ԲՐԱՆ. ՇԻՇԼԻ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 3

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ Թ. ԹԵՐԶԵԱՆԻ

- ՄՏԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ. — ՄԱՆ Ա. 7 էն 9 տարեկան տղոց համար ընտիր հրահանգք եւրոպական մէթոտով աղայքը վարժեցնելու համար խորհրդածելու եւ առարկաները գիտելու. Գին 2, 50 ղշ.
- ՄՏԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ. — ՄԱՍ Բ. 8 էն 12 տարեկան տղոց համար՝ հրահանգք որ առաջնոյն շարունակութիւնն են՝ եւ կը վարժեցնեն աղայքը ամէն տեսակ նիւթոց վրայ բաղդատութիւններ ընելու եւ դատելու: Միանգամայն իբր ընթերցարան կրնայ գործածուիլ. Գին 3 ղշ.
- ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Գաղղիերէն լեզուի՝ Անի ոճով, Բ. ապագրութիւն. ընդարձակ յաւելուածովք բայից վրայ. Թըղթակազմ Գին 8 ղշ.
 Կիսակազմ » 10 ղշ.